

ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆԱԿԱՆ

ՏԵՍԱԿԱՆ ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆՈՒԹԻՒՆ

325. ՆԻԻԹԻՆ ԲՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ. — Նիւթին բնութիւնները ոչ միակ է ոչ միօրինակ են բոլոր Խորհուրդներուն մէջ: Այս պատճառաւ տակաւին շատ խնդիրներ կը յուզուին ոչ միայն Խորհուրդները ընդունողներուն և մերժողներուն միջև, այլև Խորհուրդները ընդունող Եկեղեցիներուն միջև, ու մինչև անգամ միևնոյն Եկեղեցիին վարդապետներուն միջև, նիւթերուն միութեան կամ բազմութեան, էականութեան կամ պատահականութեան և անոնց կիրառութեան մասին: Աւելորդ է հոս յառաջ բերել այդ խնդիրները: զորք մասնաւոր յօդուածներով պիտի շինենք մէն մի Խորհուրդի առթիւ, նիւթերուն կարգը կը համարուի նաև ձեռնագրութիւնը, որ շօշափելի և արտաքին նշան մըն է, ու Լատինաց վարդապետները, աւելի հեռուն երթալով. նոյնիսկ անհատական գործերը. մեղքը կամ կոմքի հաւանութիւնն ալ նիւթ կը համարեն Խորհուրդներէն ոմանց համար: Բայց մենք բուսականանանք յիշելով լոկ հոս ամէն Խորհուրդի համար էական է որևէ նիւթ մը:

326. ՆԻԻԹԻՆ ԶՐՈՒԹԻՒՆԸ. — Բայց եթէ մէկը հարցնէ թէ արտաքին և մարմնական նիւթը ինչպէ՞ս կրնայ պատճառ նկատուիլ ներքին և հոգեկան շնորհաց, պէտք է անվտանգ պատասխանենք թէ չենք կրնար նիւթին՝ իբրև նիւթի՝ վերագրել որևէ գերբնական կամ բարսյակ հանգ որութիւն: Միայն կ'ըսենք թէ ցարկով շնորհաց տրւութիւնը Քրիստոսի կամքէն է, Քրիստոս կրնայ անօրինել սրբէ բան, որ միջոց ըլլայ իր կամքին, և որովհետև զգայական և մարմնական միջոցները մարդուն մէջ ներքին և հոգեկան իրերուն զբոսիչներ են, յարժարազոյն էր անշուշտ որ շնորհաց յայտնութիւնը կատարուէր նոյն այն կերպով

որով կը կատարուի ներքին գործոց ընդհանուր ընթացքը մարդուն մէջ: Ապա ուրեմն ամէն բան կ'ստուգուէ և հաստատողին կամքէն և ոչ թէ նիւթին բնութեան: Իսկ նիւթ անունը բացատրութեան կամուար կերպ մըն է միայն: Սա՛ ևս կայ, որ նիւթը ոչ իր հեռուար վիճակին մէջ է որ կ'առնենք, ինչպէս է ինք ըստ ինքեան, այլ իր մերձուար վիճակին մէջ, ինչպէս կը նկատուի իր ներգործական և որոշակի կիրառութեան մէջ:

327. ՆԻԻԹԸ ԸՍՏ ՁԵՒԻՆ. — Նիւթը երբ հեռուար վիճակէն մասնաւոր վիճակի կ'անցնի, կ'արշաւի, կը սահմանուի և կը յառկաւորուի բառերով՝ որոնք կը յայտնեն անոր կազմութեան ոյժը և գործադրութեան նպատակը, և միանգամայն կ'արտայայտեն զօրութիւնը և արդիւնքը որ յառաջ կու գայ անոր կիրառութենէն: Ա՛յդ է տա ևնը: Ձեւը ուրիմն պարզապէս մէն խօսքն է, որ կը պարտենակէ բոլոր յիշատակելի պայմաններուն բացատրութիւնը: «Միւրձենայ բունն առ տարրն և կատարի Խորհուրդն», ըսած է Օգոստինոս, իսկ մենք կ'ըսենք. «Միանայ նիւթն ընդ ձեռնն և լրանայ Խորհուրդն»: Բանին՝ տարրին նեա այդ միացման առաջին հեղինակն է Քրիստոս, որ իրեններուն պատուիրեց ձկնորդ յանուն Հօր ևն: Մկրտութեան մէջ նիւթին է ջուրով լուսացումը և ձեւն է խօսքը՝ որով պիտի կատարուի լուսացումը ՅԵՍՈՒՆՆ ԼՈՐ . . . »:

328. ՆԻԻԹԻՆ ՈՐՈՇՈՒՄԸ. — Բոլոր Խորհուրդներուն մէջ միշտ պէտք է փնտառել թէ ինք Քրիստոսն է նիւթին և ձեւին որոշողը, թէ նա և Ս. Գրիգէն գտնել սրուումները տարրերուն և խօսքերուն, որոնցմով կը կատարուի Խորհուրդները, թէ Խորհուրդին հաստատութիւնը Քրիստոսն է, կամ թէ, աւելի ճիշդ ըսելով, Քրիստոսով պիտի լինի, անհրաժեշտ պայման է այս, այնպէս որ կրնանք ամենայն համարձակութեամբ հաստատուէն անցնիլ Խորհուրդին ճշմարտութեան և ոչ հաստատութենէն հետեցնել Խորհուրդին ոչ ճշմարտութիւնը: Ու արդարև, եթէ կարելի չըլլայ իրօք հաստատել թէ այս

կամ այն արարողութիւնը Քրիստոսէ հասա-
տասուած է իբրև Խորհուրդ, նովին իսկ
կ'հղճուի Խորհուրդին էշմարտութեան մա-
տին պնդելու իրաւունքը: Բայց նոյնը
չենք կրնար ըսել նիւթին և ձևին համար
ի մասնաւորի: Որովհետև Խորհուրդին
ընտրեան ընդդէմ գործած չենք ըլլար
խորհելով թէ Քրիստոս Խորհուրդները
ինքն հաստատած և անոնց կատարման
մանրամասնութիւնները առաքելաց է թու-
զած: Ինչպէս ամէն սրէնսդին և իշխող
ինք կ'որոշէ սկզբունքները և սրէնքները,
իսկ գործադրութեան կամ մանրամաս-
նութեանց պայմանները կը թողու իրմէ
կարգուած փաշտօնեաներու: Պարտաւոր
ենք այդպէս մտածել մասնաւորաբար կա-
րենալ մեկնելու համար պատճառը մաս-
նաւոր կեկեղեցիներու տարբերութեանց՝ ի
մասին նոյն Խորհուրդին նիւթերուն և
ձևերուն: Վասնզի ինչ որ ունինք Քրիս-
տոսէ, զայն չենք կրնար որովէ պատճառ-
ով և որևէ պարագայի մէջ այլոյնուած
տեսնել, մինչ մարդկային անօրինու-
թիւններէ բխած բաները կրնան բազմա-
նալ և տարբերուիլ հետզհետէ:

320. ՊԱՇՏՈՆԵՒԻՆ ՊՈՐՏՈՂ. — Նիւթէն
և ձևէն վերջ, պաշտօնէին խնդիրը կայ:
Երբ պաշտօնէին վրայ իս խօսինք, զայն
չենք հասկնար իբրև ներգործող և պատ-
ճառ Խորհուրդին արդիւնքին, զի առա-
ջին պատճառը և ներգործիչ պատճառը
Աստուած է միշտ, իսկ պատ-
ճառը՝ Քրիստոսի չարչարանքներուն և
փրկագործութեան մէջ է: Ու Քրիստոս է
որ կ'արդարացնէ և շնորհք կու տայ Խոր-
հուրդներու միջոցաւ: Բայց որովհետև
Խորհուրդները շօտափելի և զգալի կեր
պով պիտի պատշտեն իրենց մերձեցող-
ներուն, հարկ է որ մար մը, իմա՛ կեն-
դանի այր մը, միջնորդ կանգնի գոր-
ծադրութեան արտաքին նշաններուն, ս-
րոնց ետեէն պիտի գան ներքին շնորհք-
ները. ու ա՛յդ է պաշտօնեան: Եւ որով-
հետև Խորհուրդներուն մէջ ամէն ինչ ա-
նոնց հիմնադրին կամքէն կախեալ է, մեզի
հնար չէ բացարձակօրէն ըսել թէ ամէն
ոք կրնայ պաշտել Խորհուրդները, այլ
անոնք միայն որոնց այդ մասին արտա-

նութիւն է արուած Քրիստոսի կամքին
համաձայն: Ուրեմն ո՛չ բոլոր մարդիկ և
ոչ բոլոր քրիստոնէաները կրնան պաշ-
տօնեայ նկատուիլ, այլ անոնցմէ ոմանք
միայն, ըստ որոշմանց Քրիստոսի: Իսկ
պաշտօնեաները երկու կերպով կը նկատ-
ուին, ոմանք սովորականներ են և ոմանք.
արատասովորներ: Սովորականները կրնան
պաշտել ամէն պարագայի և իրաց սովո-
րական կարգին մէջ՝ իրենց ընդունած՝
իշխանութեան զօրութեամբ: Իսկ արատ-
ասովորները կրնան պաշտել անհրաժեշտ
պարագայից մէջ և կամ իրենց եղած յա-
տուկ յանձնարարութեանց համաձայն և
կամ իրենց ընդունած արտօնութեան հա-
մաձայն:

330. ՊԱՇՏՈՆԵՒԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ. —
Պաշտօնեաներուն համար տոնոք են նկատի
առնուելիք պայմանները, անձնական հան-
գամանքները և գործողութեանց հանգա-
մանքները: Անձնական հանգամանքներուն
հետ անշուշտ անհրաժեշտ են պաշտօնա-
կան պայմանները, սրպէսդի նախք պիտի
պաշտէ Խորհուրդները, ստացած ըլլայ
իշխանութիւնը և իրաւունքները, որոնք
անհրաժեշտ են զանոնք կատարելու հա-
մար: Բայց հարկ է անտարակոյս որ ա-
նիկա ունենայ նաև բարոյական ձիրքեր,
որոնք են հոււաքն ու սրբութիւնը: Ա՛յս
է նշանաւոր խնդիրը, որ Եկեղեցւոյ մէջ
յուզուեցաւ Գ. դարուն, որ և կը կոչուի
Խնդիր անկեկոց կամ խնդիր կրկնամիջը-
տութեան: Այդ ժամանակներուն շտա ե-
զան եպիսկոպոսներ և քահանայներ, ո-
րոնք ինկան իրենց հոււաքէն կամ մե-
ղադրութեան հոււաքի մասին, առ երեսս
ուրացողներ կամ յայտնապէս մեղաւոր-
ներ ու անոնց պաշտօնավարութիւնը,
առիթ տուաւ յուզելու հոււաքացիներու
խղճմտանքը, թէ ինչպէ՞ս կրնայ ուրիշ
մը քրիստոնէական հոււաքէին առաջնոր-
դել անձ մը, որ ինքնին չունի այդ հա-
ւաքը, կամ որ թշնամի է այդ հոււաք-
քին՝ ինչպէ՞ս կ'ուզէ զայն փառաբերել:
Ասիացիները և Ափրիկեցիները, գլխա-
ւորութեամբ Փիլիպիանոսի և կիպրիա-
նոսի, անվաւեր և ոչինչ կը հուշակէին
հերձուածող կամ հերեփկոտ պաշտօնէի՝

արուած մկրտութիւնը, և այս կարծիքը ատեն ժբ արեց, մինչև Նիկիոյ ժողովը, ուր յազմեց կարծիքը անոնց՝ որոնք անկարելի կը հռչակէին մկրտութիւնը և վաւերական՝ անարժան պաշտօնէէ տրուածն ալ: Ու այս վարդապետութիւնը ընդունուած է այժմ բոլոր Եկեղեցիներուն մէջ:

331. ՊԱՇՏՈՆԷՒՆ ԳՈՐԾՆՈՒՆ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆԸ. — Այս կարծիքին ներքին փաստը կը հիմնուի Խորհուրդներուն բնութեան և զօրութեան վրայ: զի եթէ Խորհուրդին իսկութիւնը Քրիստոսն է, և նոյն ինքն է առաջին և գլխաւոր գործիչը, ապա ուրեմն անոր արդիւնքը բոլորովին իրմէ է որ կախեալ է. հետեւաբար և պաշտօնէին անձը և անձնական հասցածանքը ոչ մէկ կերպով արդէք կ'ըլլան, որ գործը կատարուի այնպէս ինչպէս հաստատեց անոր Հաստիչը, որովհետեւ գործը գործուած չի կարող ընդունուիլ և ոչ թէ գործողին ձեռքերէն է որ կ'առնէ իր փորութիւնը: Ան այսպէս Խորհրդաց բնութեան մասին կազմուած այս վարդապետութիւնը, որ նոր կ'երեւի ըստ բանաձեւին, կը յարմարի հիներուն վարդապետութեան հետ, զոր կը քաղենք առաջին սուրբ ժողովին վճիռներէն: Անտարակոյս նոր չէր ուրիշ կերպ դատուած ընել այն մասին, եթէ ոչ անոր մէջ անսնդի հիմք առաքելական վարդապետութեան, զոր մերձակորդարեք աներկբաբար անայլայլ պիտի պահէին: Սակայն Ս. Գրքի կարգ ժբ խօսքերն ալ արդէն նոյնը կը վարդապետեն, ոչ զողարկեալ սեղմ: Պօղոս՝ խստելով առաքելաց վրայ, իբրև Անտարանի պաշտօնէից և Քրիստոսի Առաքելի և կոչման միջնորդներուն վրայ, կ'ընէ յայտնապէս. «Ոչ այն ինչ ոք է որ անկեացն, և ոչ այն որ ջուրն ետ, այլ որ անեցոյցն՝ Աստուած» (Ա. կորնթ. Գ. 7): Քրիստոս, խստելով Աւերակաբանի մէջ, կ'ընդունի թէ պիտի ըլլան պաշտօնականեր, որոնց ձեռքով պիտի կատարուի զօրութիւնը, թէև իրենք անմասն պիտի ըլլան այդ գործերէն: «Բազումք առիցեն զիս յաւուր յայնմիկ, Տէր, Տէր, ո՛չ յանուն քո մարգարէացաք և յանուն քո դեռ հանաք, և յանուն քո

զօրութիւնս բազումս արարաք: Եւ յայնմ ժամ առաջից ցնտա, եթէ ոչ երբեք գիտէի զանք. ի բաց կայէք յինէն ամենեքեան՝ այժ գործէք զանորէնութիւնս (Մատթ. է. 22-23):

332. ՈՒՈՒՐՎՈՒԹԻՒՆՆԵՐ ՊԱՇՏՈՆԷՒՆ ԳԻՄ. — Հակառակորդները սովոր են ըսել թէ ոչ մէկը կրնայ տալ իր շունեցածը, հետեւաբար և պաշտօնեան չի կրնար տալ հուսալի և զօրութիւն, եթէ չունի զայն: Սակայն միշտ կ'ըլլայ այդ խօսքը այն ատեն ժանտաւած, երբ իրմէ է որ պիտի տայ, բայց սրովհետեւ իրմէ չէ որ պիտի տայ Խորհուրդին պաշտօնեան, ըսել է թէ այդ սկզբունքին ճշմարտութիւնը տրուած թեան իշխանութեան կը վերաբերի և ոչ թէ տրուած իբրև, և բաւական է որ պաշտօնեան անննայ իշխանութիւնը, որպէսզի արդարանայ առածը: Կ'առաջիկան Եսայի թէ Քրիստոս ըստ առաքելութեան: «Աւելք չոգին Սուրբ» (Յովհ. Ի. 22), որպէսզի կարող ըլլան յետոյ ուրիշներուն բաշխել չոգին, սակայն գիտելի է թէ առաքելաց տրուածը ոչ թէ չոգւոյն Սըրբութիւնն է, այլ իշխանութիւն ըստ ի հպարտս, որովհետեւ ո՛յդ իսկ էր կարեւորագոյն բոլոր Հայերի և մեկնիշխներ այս պատճեն կը չեռնեցին եկեղեցական իշխանութեան հաստատութիւնը: Եւ արդարեւ, ոչ մէկ ատեն և ոչ մէկ տեղ իշխանութիւն անեցողը մեղապարտ կ'առկածուելուն համար իշխանութեանէ կ'իջնայ, զի եթէ այնպէս ըլլար, այն ատեն երկուանքի և առաջնապի պիտի մտնուէին Խորհուրդներուն մօտեցողները, խորհելով թէ մի գուցէ անարժանութեան մէջ զբանը ըլլայ պաշտօնեան և ինքը զրկուի Խորհուրդին արդիւնքէն: Խորհուրդներուն մօտեցողները իրենց յոյսը պատք է դնին ոչ թէ պաշտօնէին արժանաւորութեան, այլ հաստատողին զօրութեան վրայ: Ընդհար կը տարբերի եթէ իբրաւ ազօթքի յանձնենք ինքզինքնիս, զի այն ատեն բովանդակ ակնկալութիւնը հիմնուած է ազօթողին արժանաւորութեան վրայ, և իսկ պատճառաւ, որոնք անորներէն կամ արժանաւոր կարծուածներու, կ'ազգուսին ազօթքի խնդրուածքները:

333. ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՊԱՀԱՆՁԲ. — Եթէ պաշտօնեայէն չեն պահանջուիր անձնական ձիրքեր, բայց կը պահանջուին այն պայմանները, որոնք կարևոր են որպէս զի գործուած գործը իսկապէս ընկան գործ ըլլայ և գործուած՝ նշանակեալ պայմաններուն համեմատ: Նիւթին և ձէին և առոնց նման կէտերուն մասին խօսեցանք արդէն, առանց շատ յիշելու պաշտօնէն պահանջուած պայմանները: Առոնց կարգին գլխաւորն է դիտաւորութեան պայմանը: Դիտաւորութիւնը, ինչպէս կ'իմանանք զայն հոս, կամքին որոշուալ այն գործն է, որով մէկը դէպի բան մը կը բերուի, զոչն ի գործ դնելու կամ զանց ընելու կամ ձեռք բերելու համար: Կամքին այդ բերումը կը տարբերի ըստ տարբերութեան առարկային կամ ըստ տարբերութեան եղանակին, և կրնայ լինել բերում մը՝ կատարելու համար բան մը, ըստ նիւթական հանգամանքներուն միտքն կամ կատարելու համար նայն գործին տեսական հանգամանքներուն համեմատ և առ նիւթական հանգամանքներուն համար դիտումը կը կոչուի արտաքին դիտաւորութիւն, իսկ ներքին, տեսական հանգամանքներուն համար եղածը՝ ներքին դիտաւորութիւն: Արտաքին դիտաւորութիւնը երբեմն լուրջ է և կրբեմն խաղական կամ ծաղրական: Լուրջ արտաքինը կ'ուզուի գործին իսկութեան, առանց նկատելու թէ ներքինը ի՞նչ է կամ պիտի ըլլայ, իսկ խաղական արտաքինը գործը

կերպարանել միայն կ'ուզէ, ինչպէս կը կատարուի թատրոններու մէջ, ուր դերասանները գերը կը ճգնին կատարել և ոչ թէ գործը: Այս կարգին կրնան վերածուիլ նաև գործերը խելագարներուն և յիմարներուն, արբեցողներուն և խեղկատակներուն և նմաններուն, որոնք չեն կրնար բան մը կատարելու կամք ունենալ, և աչ իսկ կը հասկնան գործածնին:

334. ԻՅՅԱԼՈՐՈՒԹԻՒՆԸ ՊՈՐՄԻՆ ՄԷՋ.

— Իսկ եղանակի տարբերութեան տեսակէտով, կը տարբերին սուպէս. Դիտաւորութիւն արդիւնքի մէջ, Դիտաւորութիւն զօրութեան մէջ, Դիտաւորութիւն ունակական, Դիտաւորութիւն մեկնողական: Արդիւնքի է՝ երբ մէկը յայտնապէս և կամքի որոշ ներգործութեամբ կ'ուզէ բան մը ընել, իսկ զօրութեամբ է երբ որոշ կամքով կը գործէ բան մը, որ ուղղակի պատահաւ է մտեանքի. և այն ատեն պարզապէս վերաբերմամբ կամքը կը տարածուի նաև գործին մէջ, ունակական է՝ երբ մէկը բան մը կ'ընէ այնպէս ինչպէս ինքը և ուրիշները սովոր են ընել, առանց յատուկ մտադրութեան դէպի գործը, զայն կատարած ատեն, այլ որոշեալ նպատակին տանող իրեն սովորական ընթացքով, մեկնողական է՝ երբ որ յատուկ ընթաց կամ համընթաց կամ յեղնթաց պարագայ ցոյց կու տայ թէ գործողը այդորոշ նպատակը ունէր և ոչ թէ ուրիշ մը:

ՄԱՂԱԲԻԱ ԱՐԲԵՊՍ. ՕՐՄԱՆԵԱՆ

(Շարունակելի՛ 33)

